



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՌՈԶԻՆԿՈ

1 MAR 2010

Հ Ո Ւ Թ Ա Տ Ե Տ Ր

ՀԵՏԱԽՈՒՅՁ—ՀՐԵՏԱՎՈՐԻ

Հ Ա Մ Ա Ր

358.1

Պ-62

Պ Ե Տ Շ Ր Ա Տ

1 9 3 2

3 Ե Ր Ե Վ Ա Ն

54 JUL 2015

358.1

Ռ-62 ս

Ա. ՌՈԶԻՆԿՈ

ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՅԵՏԱԽՈՒՅԶ—ՆՐԵՏԱՎՈՐԻ ՆԱՄԱՐ

Հավանություն և գտել Բ.-Գ. Կարմիր
Բանակի հրետազորի տեսչության կողմից

1007
33806

ՊԵՏԱԿԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1932

ժամկետին չեն ստացվել, ապա ուրեմն հետախուզու-
ղության աշխատանքն ապարդյուն է անցել, հրե-
տանին իր կրակով վոչ միայն չի ոգնի հետևա-
կին, այլ և ինքը կարող է հակառակորդի կրակից
մեծամեծ կորուստներ կրել մարդկանցով, ձիյե-
րով և նյութական մասով:

Հրետանային հետախուզության մեջ մտնում է
հակառակորդի և տեղանքի հետախուզությունը,
իր հետևակի վրա դիտողություն ունենալը (վոր-
տեղ է հետևակը և ինչ է անում) և այն բոլոր
ավյալներին նախապատրաստելը, վորոնք անհրա-
ժեշտ են մարտկոցով կրակ բանալու համար:

Հակառակորդին հետախուզել՝ նշանակում է վո-
րոշել, թե հակառակորդը վորտեղ է և ինչ է ան-
ում: Տեղանքի հետախուզությունը բազկացած
է՝ ճանապարհի, դիտակետերի, կրակային դիրքի,
քարշի ջոկի և մարտապաշարի մատակարարման
ջոկի տեղերի և հանդատի համար դասավորվելու
տեղերի հետախուզությունից:

Բացի հակառակորդին ու տեղանքն հետախու-
զելուց, հրետանին դիտողություն է ունենում իր
հետևակի վրա, վոր իմանա, թե վորտեղ է հետե-
վակը և ինչ է անում: Այս անհրաժեշտ է նրա
համար, վոր հրետանին իր կապը չկտրի այն հե-

տևակից, վորին նա ապահովում է և վորպեսզի
նա իր կրակով հետևակին կորուստներ չպատ-
ճառի, ինչպես այդ շատ հաճախակի պատահում
էր իմպերիալիստական պատերազմում, շնորհիվ
իր հետևակի վրա վատ կազմակերպած դիտողու-
թյան:

Հրետանային հետախուզությանը մասնակցում
են հրետանու բոլոր զորամասերի և ստորաբա-
ժանույնների հրամատարները: Բացի դրանից
այդ հետախուզությանը մասնակցում են՝ 1) Վե-
յեքիլյա մասնագիտական և հետախուզական ու-
զանները՝ մարտկոցների և դիվիզիոնների ղեկա-
վարման դասակները, տեղագրական (տոպոգրա-
ֆիական) ջոկատները, ողաչափական պոստերը և
ձայնաչափական ու լուսաչափական մարտկոցները
և 2) Ուլային հետախուզական ուզանները՝ ինքնա-
թիոններ և ողապարիկներ, վորոնք գործադրվում
են վերերկրյա հետախուզողի աչքից ծածկված հրե-
տանային նպատակները գտնելու, և մարտկոցի,
դիվիզիոնի վարած կրակը ճշտելու համար:

Տեղագրական ջոկատը նախապատրաստում է
հենակետերի ցանցը և հիմնականում տեղանքի
վրա ստուգում է կրակային դիրքի, դիտակետերի
և նպատակների դասավորման ճշտությունը, վո-

րոնք վորոշված են քարտեղի միջոցով, մարտկոցի հրամատարի աշխատանքը հեշտացնելու համար և հիմնական հրահրթն ամենից ավելի մեծ ճշտությամբ դեպի նպատակն ուղղելու համար:


Ողաչաքական պոստը հսկում է քամու ուժի և ուղղության վրա, ողի ջերմաստիճանի և խտության վրա, վորպեսզի կարելի լինի համապատասխան ուղղումներ մտցնել անկյունաչափի և նշանոցի մեջ:

Չափանչափական և լուսաչափական մարտկոցները վորոշում են հակառակորդի մարտկոցների կրակային դիրքերի տեղերը դրանց ձիգերի ձայնի, բոցի և ծխի համեմատ:

Հրետանային հետազոտության հիմնական որդանները մարտկոցների և գիվիզիոնների ղեկավարման դասակներն են, վորոնք կատարում են աշխատանքի գլխավոր մասը (չծանկար 1):

Գծանկարից յերևում է, վոր ղեկավարման դասակի հիմքը հետախույզներն են կազմում: Այստեղից պարզ է, թե ինչ նշանակություն ունի հետախույզների լավ և վորոշակի աշխատանքը: Հետախույզի աշխատանքն իրոք վոր ահագին նշանակություն ունի մարտկոցի համար: Հետախույզն ունի հետեւյալ պարտականությունները՝

1. Հետախույզի հակառակորդին և տեղանքը:
2. Դիտողություն ունենալ իր հետևակի առաջավոր մասերի դասավորման և գործողությունների վրա:



Գծանկար 1. Մարտկոցի ղեկավարման դասակի կազմը:

3. Ոգնել մարտկոցի հրամատարին տվյալներ պատրաստելու կրակ բանալու համար և դիտել իր արկերի պայթումները:
4. Տանել պահպանության ծառայությունը:
5. Կատարել լրատարի և ձիապանի պարտականությունները:

II. ՃԱՆԱՊԱՐԶԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆԸ

Հետախուզելով ճանապարհը, հետախուզոն ապահովում է հրետանու անարգել շարժումը: Հետախուզութունը կատարում է հեծելադետքերով: Պարագլին հայած, ճանապարհի հետախուզութունը կարող է լինել վաղորոք կազմակերպված և սովորական ձևով կազմակերպված: Յեթե հետախուզութունը կազմակերպվում է վաղորոք՝ ապա ճանապարհի հետախուզության համար հեծելադետքն ուղարկվում է մի որպանացք առաջ իրենց զորամասերի շարժման ճանապարհով: Ճանապարհի սովորական հետախուզության ժամանակ հեծելադետքը յեկակետից մեկնում է վողջ զորասյունի մեկնելուց 15—20 րոպե առաջ և ընթանում է 1—2 կիլոմետր հեռավորության վրա իր մարտկոցի առջևում:

Ճանապարհի վաղորոք հետախուզությունն ուղարկվում է զորասյունի հրետանու պետի կողմից առաջապահի (ավանգարդի) մի վորևե դիվիզիոնից: Ճանապարհի սովորական հետախուզությունն ուղարկվում է շարանի (եղելոնի) ավագ հրետանային պետի կարգադրությամբ շարանի առջևի մասում գտնված մարտկոցից:

Ճանապարհի վաղորոք հետախուզության ուղարկված հրծելադետքի կազմի մեջ մտնում են՝ դիվիզիոնի հետախուզության պետը, ավագ հետախուզոն ու 3—4 հետախուզո՝ դիվիզիոնի ղեկավարման դասակից: Ճանապարհի սովորական հետախուզության ժամանակ հեծելադետքի կազմի մեջ մտնում են շարանի առջևի մասում գտնված մարտկոցից մեկ հրանոթապետ և մեկ հետախուզո, իսկ քնացած մարտկոցներից մի-մի քարշի ջոկի հրամատար և մի-մի հետախուզո:

1. Աննապարհի հետախուզության մեկնելուց առաջ.

1) Ճշտությամբ պարզիր խնդիրը, առաջիկա շարժման ուղին:

2) Հրամատարից իմացիր, թե վորտեղ կարող է գտնվել հակառակորդը, վորտեղ են և ինչպես են շարժվելու մեր զորքերը:

3) Յեթե վաղորոք կազմակերպված հետախուզության ևս մեկնում, ապա հեծելադետքի պետից իմացիր, թե վորտեղ է նշված մեծ հանգստի կամ գիշերոթի ուղոնը:

4) Իմացիր, թե ուր պետք է ուղարկել զեկուցագրեր անպիսի խոչընդոտների մասին, վորոնց

վերացնելու համար պահանջվում է սապյորների կամ հատուկ խմբի մասնակցութունը:

5) Գրի առ, թե վոր ժամկետներին պետք է ղեկուցադրեր ուղարկել հետախուզության հետազննության մասին, վորովհետև հրամատարը կարող է հիվանդանալ, սպանվել կամ վիրավորվել և դու հարկադրված կլինես փոխարինելու հեծելադետքի պետին:

2. Հանապարհի նախարդակը (կրոկի, սխեմա)

6) Ուսումնասիրիր քարտեզն՝ անկախ հեծելադետքի պետից և պատրաստիր ճանապարհի նախարդակը: (սխեման, կրոկին): Իրա համար քարտեզը տողեր հավասար քառակուսիների, ամեն մի կողմը 1—2 սանտիմետր և պատրաստիր մի թերթ մաքուր թուղթ: Այդ թերթ թուղթը նույնպես տողեր քառակուսիների, բայց ամեն մի կողմը 2—4 սանտիմետր, նայած թե ինչպիսի մասշտաբ ունեցող քարտեզից ես վերցնում, այնպես, վոր նախարդակի մասշտաբը հասցնես 400 մետրի՝ 2 սանտիմետրի մեջ, կամ 200—250 սաժենի մեկ մատնաչափի մեջ:

7) Քարտեզի վրա գունավոր մատիտով նշանա-

կիր այն ճանապարհը, վորով պետք է շարժվել, և դրա յերկու կողմերից՝ 1—2 կիլոմետր հեռավորության վրա գծեր քաշիր, դա յիլ կլինի հենց ճանապարհի նախարդակի սահմանները: Այդ յերկու գծերի միջև պարփակված քարտեզի 2—4 կիլոմետր լայնության շերտը կարկինի կամ մասշտաբի քանոնի ոգնությամբ փոխանցիր քո ունեցած թերթի վրա:

8) Ուշադրությամբ հետևիր, վոր բոլոր տեղական առարկաները, ճանապարհները և քարտեզի այլ նշանները ճշտությամբ տեղավորվեն թերթի համապատասխան քառակուսիների մեջ: Մկզբում գծիր ճանապարհները, գետերը, բնակավայրերը, հորիզոնականների կտուրներով նշիր բարձրունքները, և ապա միայն բոլոր Ֆացածը:

3. Շարժման ժամանակ.

9) Ամբողջ ժամանակ հետևիր ճանապարհին, համեմատիր տեղանքը քո ճանապարհի նախարդակին և ուղղումներ արա, վորովհետև քարտեզը կարող է այդպիսի մանրամասնություններ չունենալ կամ ընդհանրապես կարող է հնացած լինել:

10) Ուշադրություն դարձրու, թե ճանապարհը

վորքան ե անցանելի, ինչպիսի ուղղորդություն
(զատիվարություն) ունեն վերելքներն ու վարելք-
ները, թե հնարավոր ե արդև՞ք թ. Ն. վարակված
տեղամասերը քամու փշելու կողմից շրջանցել, հի-
շիր և այս ամենը նշիր քո նախարդակում և զե-
կուցիր հեծելադետքի պետին:

11) Յեթե շրջանցող ճանապարհ ընտրելու հա-
մար հեծելադետքի պետը քեզ աջ ու ձախ կողմն ու-
ղարկի, ուշադրությամբ զննիր տեղանքն ու ճանա-
պարհը և միտքդ պահիր հեծելադետքին միանալու
կարգը, թե չե չետ կմնաս:

12) Լավ միտքդ պահիր այն ճանապարհը, վո-
րով շարժվում ես, հիշիր, վոր քեզ միշտ կարող
են գեկուցազրով դեպի չետ ուղարկել կամ դու
կնշանակվես մարտկոցի (դիվիզիոնի) ուղեցույց:

4. Կամուրջ գննելու ժամանակ.

13) Ուշադրություն դարձրու փովածքի ամրու-
թյան և անփնաս լինելու վրա և անպայման իմա-
ցիր, թե ինչ դրության մեջ ե ներքեի կառուց-
վածքը, նմանապես, վորքան սարքին են կամրու-
ջի ելքերը, նրանց փշանալու հնարավորությունը
հրետանու անցնելու ժամանակ:

5. Գեթի հուն (կսրոնի) փնտելու ժամանակ.

14) Միտքդ պահիր, վոր հունը (ծանծաղուտը)
հեշտությամբ կարելի չե վորոշել յերկու կողմից
դեպի դետը բերող ճանապարհների միջոցով, ա-
ռանձին սայլերի անիփների հետքերի ոգնությամբ,
գետի ծանծաղուտների և ցածր ավերի ոգնու-
թյամբ. արագ հոսանք և քարքարոտ դաշտ ունե-
ցող լեռնային գետերի ծանծաղուտ տեղերը միշտ
նկատելի չե լինում շորհիվ ջրի թեթև ծածան-
ման կամ լափին տալուն, Հուճի խորությունը
ջրի հանդարտ հոսանքի դեպքում մեկ մետրից
ավելի չպետք ե լինի (հրետանային ձին, մինչև
թամբի կաշվե թևերի ներքեի չեղը ջրի մեջ ընկղմ-
ված):

15) Ուշադրություն դարձրու գետի հատակի
վրա, միտքդ պահիր փոսերի, խոշոր քարերի,
հեղեղի բերած ծառերի տեղերը, վորպեսզի, չեթե
հարկ լինի մարտկոցին ցույց տաս հունի տեղը,
մարտկոցին զգուշացնես վտանգավոր տեղերի մա-
սին:

16) Վորոշիր, թե վորքան հարմար ե դեպի
գետի հունը տանող վայրեջքը և հունից դեպի
հակառակ տանող վերելքը:

6. Բնակարանորդի (կվարտիրյերի) աշխատանք կատարելիս.

17) Հիշելը, վոր հանգստի համար դասավորվելու տեղը պետք է ապահովի հանգստի իրական հնարավորությունը և միաժամանակ արագ կերպով հնարավոր լինի մարտակարգի անցնելու հակառակորդի անակընկալ հարձակումը լետ մղելու համար, վորպեսզի հանգստի տեղը թագնված լինի հակառակորդի ողջուն հետախուզությունից և հարմարություն ունենա լերթասյուն կազմելու համար:

Լավ հիշիր քո ստորաբաժանման համար հատկացված տեղամասը, վորտեղ է նշվում նյութական մասի մարդկանց, ձիերի դասավորման տեղը, այլ և ձի ջրելու և թրտաքնոցների տեղերը:

18) Զորասյունը մոտենալիս, մյուս բնակարանորդների հետ միասին դիմավորիր քո ստորաբաժանմանը հատկացված տեղամասից մեկ կիլոմետր հեռու և ճանապարհով լետ գալիս հրամատարին զեկուցիր դասավորման մանրամասնությունների մասին:

7. Փարոսի յեվ ուղեցույցի աշխատանքը.

19) Ճանապարհի կամ կամրջի տեսարքություն

մասին մարտկոցին նախազգուշացնելու համար ճանապարհների բաժանման տեղում բարձրաձայն կանչիր՝ «շուռ տուր դեպի աջ» կամ «կամուրջը կտրած է, շրջանցիր դեպի ձախ» և այլն:

Յերբ գլխի նրանոթը կանցնի խոչընդոտի մոտից, հասիր հեծելաղետքին և միացիր նրան:

20) Յեթե քեզ կթողնեն մասերին զգուշացնելու համար, վոր նրանք նախազգուշական միջոցներ ձեռք առնեն, ապա ամեն մի մարտկոցի մոտենալու ժամանակ զգուշացրու՝ «այստեղ ուղղորդվայրեջք կա» կամ «այստեղ առու կա» և այլն: Յերբ բոլոր մարտկոցները կանցնեն խոչընդոտների մոտից, ապա հասիր քո հեծելաղետքին:

21) Ճանապարհը շրջանցելու մասին նախազգուշացնելու համար դիմավորիր գլխի մարտկոցին շրջանցելու տեղից 50—100 քայլի վրա և բարձրաձայն զեկուցիր՝ «առջևում ճանապարհը վատ է, այստեղ և շրջանցը, յես կառուցնորդեմ» և ցույց տուր շրջանցող ուղին:

III. ԱՌԱՋԱՎՈՐ ՅԵՎ ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ՀԵՏԱՆՈՒ-
ԶՈՒԹՅՈՒՆ.

Առաջավոր հեծելաղետքի վրա խնդիր է դրվում

հետախուզել և հայտարարել հակառակորդին, տե-
սողական կապ պահպանել իր հետևակի առաջա-
վոր մասերի հետ, անընդհատ դիտողութուն ու-
նենալով նրանց դասավորութան և գործողու-
թյունների վրա. մարտկոցի հրամատարին զեկու-
ցել հակառակորդին հետախուզելու և իր հետևակի
գործողութունների վրա դիտողութուն ունենա-
լու հետևանքների մասին. զուգընթացաբար գնա-
հատիր դիտակետերի հնարավոր բնագծերը և
կրակային դիրքերի ուսուցիչները, մարտկոցի հրա-
մատարին զեկուցելով այդ գնահատության հետե-
վանքների մասին:

Առաջավոր հետախուզողութունն ուղարկվում է
յերթական շարժումն սկսելու հետ միաժամանակ,
յերթ առաջիկա յերթի ընթացքում հակառակորդի
հետ ընդհարում է սպասվում. Առաջավոր հետա-
խուզողութունն ուղարկվում է մարտկոցի կամ
դիրվիզիոնի հրամատարի կարգադրությամբ զեկա-
վարման դասակից: Իրա կազմի մեջ սովորաբար
մտնում են՝ զեկավարման դասակի հրամատարը
(իսկ զիրիզիոնի առաջավոր հեծելադեպոում՝ զի-
վիրիոնի հետախուզողության պետը), ավագ հետա-
խուզողը, յերկու ձիավոր հետախուզող, կապի ջրող
շուկի հրամատարը, հեռախոսային յերկանիվը ձիա-

վարի հետ, ավագ կապավորը և յերկու շարքա-
յին կապավոր (փոքր ջոկատներում, որինակ, յերթ
մարտկոցը տրված է կողքի պահպանության մեջ
գտնվող վաշտին և այլն, առանց հեռախոսային
յերկանիվի, միմիայն հեռախոսիչներ են նշանակ-
վում): Առաջավաճի (ավանգարդի) հրետանուց
ուղարկված առաջավոր հետախուզողութունը շարժ-
վում է յերթական ուղեկալների շերտում, իսկ
գլխավոր ուժերի հրետանուց ուղարկված առա-
ջավոր հետախուզողութունը շարժվում է կամ գլու-
խավոր ուժերի շարանի գլխից, կամ առաջավաճի
դորասյունի տտից, նույն թե նշված պլանով
ինչպես է յենթադրվում ոգտագործել դրան:

Հեծելադեպոը շարժվում է վոստյուններով,
կանգ առնելով հարմար բնագծերում և արագ քել-
քով անցնելով դրանց միջև ընկած տարածու-
թյունները: Լեռնոտ վայրում շարժվում է տեղից-
տեղ վտավաններով, առանց դուրս գալու հետե-
վակ դետքերի գծից զեպի առաջ, վորպեսզի ի-
րեն ոչսկի չենթարկի հակառակորդի հետ անմի-
ջականորեն ընդհարվելու: չքողարկատել յերթա-
կան պահպանությունը, պահպանելով քողարկման
բոլոր միջոցները: Հակառակորդի կողմից լավ դիտ-
վող տեղամասերը պետք է շրջանցել թագնված

1007
33806

ուղիներով, անցնելով մեկ մեկ ձին քշած կամ ձիուց իջած: Առաջանալով դեպի հետևակ դեաքերի շերտը, հեծելադեպը ձիուց իջնում եւ թողնելով ձիերն ու հեռախոսային յերկանիվը, շարժվում եւ յերթական ուղեկալի կորիզի յետևից:

Հրամատարական հեծելադեպը միշտ շարժվում եւ մարտկոցի հրամատարի հետ կամ նբանից աննշան հեռավորութան վրա: Նրա տեղը գործայունի մեջ ամբողջապես կախված եւ յենթադրվող մարտի պայմաններից:

Հրամատարական հեծելադեպի կազմի մեջ մտնում են՝ հետախուզութան ջոկի խումբը, ավագ հետախուզողը, ձիավոր հետախուզողը, ավագ հեռախոսիչը, կապի Զ-րդ ջոկից յերկու հեռախոսիչ հեռախոսային յերկանիվի վրա:

Հետխոսն հետախուզաները շարժվում են կրակալին դասակի հետ և տանում են պահպանութան ծառայութուն, իսկ մարտկոցի բացազատման ժամանակ գնում են հրամատարական դիտակետը:

1. Առաջավոր դիտակետի բնորոշումը.

Առաջավոր դիտակետի ընտրութան ժամանակ

անաջ նայիր, տես արդյոք տեսածիրը լավ եւ, յերևում են արդյոք հակառակորդի կողմից դեպի քո հետևակը բերող մատուցները, արդյոք լավ են յերևում մտավոր նպատակները, հնարավորութուն կա արդյոք քողարկվելու հակառակորդի աչքից և ծածկվելու նրա կրակից, կա արդյոք ծածկված և հարմարին մատուցներ՝ վորտեղով հնարավոր և հուսալի կապ ստեղծել մարտկոցի հրամատարի հետ:

2. Հրամատարական դիտակետի բնորոշումը.

Հրամատարական դիտակետի ընտրութան ժամանակ նայիր, թե ինչպիսի տեսածիր ունի մարտկոցի կրակալին սեկտորը ճակատի յերկայնությամբ և խորությամբ, յերևում են արդյոք հարևան մարտկոցների կրակալին սեկտորները և շկան արդյոք առջևում անպիսի տեղական առարկանք, վորոնք խանգարում են լավ դիտելուն. կարելի չե արդյոք քողարկվել և ծածկվել հակառակորդի գիտողութունից ու կրակից. կան արդյոք հարմարին և ծածկված մատուցներ, դիտակետն արդյոք հեռու չե կրակալին դիրքից հնարավոր ե արդյոք հուսալի կապ ստեղծել կրակալին դիրքի և հետևակի հետ:

3. Կողմի դիտակետի ընթացումը.

Կողմի դիտակետի ընտրությունն ժամանակ զրկ խավոր ուշադրությունը դարձրու նրա վրա, վոր այդտեղից լավ յերևան այ տեղամասերը, վորոնք վատ են յերևում կամ ամենին չեն յերևում հրամատարական և առաջավոր դիտակետերից, վոր այդ դիտակետը լավ քողարկված լինի, ծածկված լինի հակառակորդի կրակից և հարմար լինի մարտկոցի հրամատարի հետ կապ ունենալու տեսակետից.

Մի ընտրիք դիտակետեր խիստ հկատելի մերկ բարձունքների գագաթներին արհեստական հողաթմբի վրա կամ լավ յերևացող կամ քարտեզի վրա նշված տեղական առարկաներին մոտիկ, վորովհետև զբանով հակառակորդին հնարավորություն կտաս հեշտութեամբ քեզ հայտարարելու և կհեշտացնես նրա փորձնական հրաձգություն կատարելու գործը:

IV. ԿՐԱԿԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆԸ.

Կրակային դիրքի ընտրությունը կատարում է կրակային հեծելազետքը, վորն ուղարկվում է առաջ հրամատարական հեծելազետքի հետ միաժա-

մանակ: Մինչև աշխատանքի սկիզբը նա ընթանում է մարտկոցի հրամատարի յետևից: Այս հեծելազետքի կազմի մեջ մտնում են՝ կրակային դասակի հրամատարը կամ կրակային շոկի հրամատարը, հրանոթների հրամատարներից մեկը, 4 արշի շոկի հրամատարը, և մեկ հետախույզ հրամատարական հեծելազետքի կազմից՝ կրակային դասակի և մարտկոցի հրամատարի հետ կապ պահելու համար:

1. Կրակային դիրքի ընթացումը.

1) Հիշել, վոր կրակային դիրքը պետք է՝

ա) Հնարավորության չափ մեծ հորիզոնական գնդակո՞ ունենա անկյունաչափի 7—50-ական բաժանումներ յահմաններում հիմնական ուղղութիւնից դեպի աջ և դեպի ձախ, իսկ ուղղաձիգ գնդակո՞ղը նվազագուցն նշանոցով լինի 40-ից վո՞չ ավելի (բացի այն մարտկոցներից, վորոնք կրակում են հեռավոր նպատակների կրա):

բ) Բավարարի քողարկման պահանջներին, ծածկվելու հակառակորդի վերերկրյա և ողային դիտողությունից, հաշվի առնելով նաև հակատանկային պաշտպանություն պահանջները. լավ կլինի՞

յեթե կրակաչին դիրքի առջևում և թհերում լինեն
բնական խոչընդոտներ, վորոնք կարող են կանգ-
նեցնել տանկերը:

գ) Ազատ ճանապարհ ունենա առաջ շարժվելու
կամ չետ շարժվելու համար:

2. Նվազագույն նշանոցի վորոցեր:

Նվազագույն նշանոցը վորոշելիս, իմացիր ծած-
կոցի անկյունը՝ արտահայտած անկյունաչափի
բաժանումներով, դրա համար չոքեր մեկ ծնկի դ
վրա կամ դիր բուստը մի այնպիսի բարձրու-
թյան վրա, վորտեղ հետագայում դանվելու չե
հրանոթի նշանոցի ժամացույցը և չափի բաժկոցի
անկյունը, վորը դանվում և հրանոթի նշանոցի
հորիզոնական դրության և ծածկոցի կատարի մի-
ջև: Յեթե չոքել ևս ծնկի դ վրա, ապա ձեռքտ մեկ-
նելով հորիզոնական դրությամբ և մի աչքով նա-
չելով ձեռքի մակերևութի վրայով, նկատիր
առջևում ծածկոցի կատարի լանջի վրա՝ աչքի դ
և մեկնած ձեռքի դ (այսինքն, հրանոթի նշանոցի)
հորիզոնի կետը և չափի բաժկոցի անկյունը՝
արտահայտած անկյունաչափի բաժանումներով,
ոգտագործելով չերկդիտակը կամ մատներդ: Յերկ-
րորդ դեպքում ծածկոցի անկյունը չափիր բուս-

տղի միադիտակի (մոնոկուլյարի) ոգնությամբ:
Անուհետև քարտեղի ոգնությամբ կամ աչքաչա-
փով վորոշիր ծածկոցի կատարի հեռավորությունը
հրանոթի հետագայում կանգնելու կետից:

Նվազագույն նշանոցը հավասար կլինի՝
ԹՆԻԱՆՈԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Ծածկոցի անկյու-
նին՝ արտահայտած անկյունաչափի բաժանում-
ներով, դումարած կատարի հեռավորությունը՝
արտահայտած նշանոցի բաժանումներով, և ավե-
լացրած հինգ բաժանում:

Որինակ. Ծածկոցի անկյունը հավասար և
0—30, հեռավորությունը կատարից հավա-
սար և 600 մետրի (300 սաժն): Նվազա-
գույն նշանոցը հավասար կլինի՝ $30 + 5 +$
 $+ 5 = 50$:

ՀՈՒՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Ծածկոցի անկյունի $\frac{1}{4}$ ր
դումարած կատարի հեռավորությունը:

Որինակ. Ծածկոցի անկյունը հավասար և
0—20, հեռավորությունը կատարից 800
մետր և (400 սաժն): Նվազագույն նշա-
նոցը հավասար կլինի՝ $5 + 20 = 25$:
1927 թվի ԹՆԻԱՆՈԹՆԵՐԻ և լեռնաչին հրա-

նոթներն համար՝ ծածկոցի անկյունն $\frac{1}{2}$ -ը, գումարած կատարի հեռավորությունը:

Որինակ. Ծածկոցի անկյունը 0—30 և, կատարի հեռավորությունը 400 մետր է (200 սաժեն): Նվազագույն նշանոցը հավասար կլինի՝ $15+10=25$:

3. Ծածկոցի բարձրության վորոշումը.

Ծածկոցի բարձրությունը վորոշելիս, աչքի առաջ ունեցիր, վոր ծածկված դիրքը պետք է լավ ծածկի քո ձեռքերը հակառակորդի վերերկրյա հետախուզությունից: Դրա համար կարևոր է իմանալ մարտկոցի ծածկոցի բարձրության չափը: Ծածկոցի բարձրությունը հաշվելու համար, վորոշիր ծածկոցի անկյունը՝ բարտահայտված անկյունաչափի բաժանումներով և բազմապատկիք կրակային դիրքից մինչև ծածկոցի կատարը լեղած հեռավորության վրա՝ արտահայտած մետրերով կամ սաժեններով. ստացված թիվը բաժանիր 1000-ի վրա, և բաժանման հետևանքը ցույց կտա ծածկոցի բարձրությունը մետրերով կամ սաժեններով, նայած թե ինչով է արտահայտված յեղել կատարի հեռավորությունը:

Որինակ. Ծածկոցի անկյունն անկյուն է աչափի բաժանումներով հավասար 0—40, կատարի հեռավորությունը՝ 600, Ծածկոցի անկյունը հավասար կլինի $\frac{40 \cdot 600}{1000} = 0—24$

անկյունաչափի բաժանումներով:

Յերբ հրանոթները դասավորվում են վոչ փոշոտ գետնի վրա, ապա ծածկոցի բարձրությունը պետք է լինի՝ 76 միլիմետրանոց թնդանոթներին համար—5 մետրից վոչ պակաս, 107 միլիմետրանոց թնդանոթների համար—6 մետրից վոչ պակաս, 122 միլիմետրանոց հրեցների համար—7 մետրից վոչ պակաս, 152 միլիմետրանոց հրեցների համար 8 մետրից վոչ պակաս: Փոշոտ գետնի վրա բոլոր սխտեմների համար ծածկոցի բարձրությունը պետք է լինի 12 մետրից վոչ պակաս:

4. Բաց դիրքի լնջուրյունը.

Բաց դիրքի ընտրություն կատարելիս աչքի առաջ ունեցիր, վոր ալ դիրքը պետք է հնարավորություն տա ուղիղ նշանառությամբ կրակելու, հնարավորության չափ պետք է ծածկված կերպով մոտենալու ուղիներ ունենա, պետք է քար-

շակները ծածկված դասավորելու հնարավորութիւնն լինի կրակային դիրքի մոտերքում (1/2 կիլոմետրից վոչ հեռու), պետք է թե՛ր կողմում դիտակետ ունենա քամի փչելու կողմից և դիրքի մոտերքում չպետք է այնպիսի խոշոր գոտանք լինեն, վորոնք կարող են դժվարեցնել հրանոթների մանյակները:

V. ԿՈՂՄՈՐՈՇՈՒՄ.

Հեծելադետքերում աշխատելիս անագին նշանակութիւն ունի արագ կողմորոշելու ունակութիւնը, այլ կերպ ասած, վորոշել իր գտնված տեղը վայրում հյուսիսի նկատմամբ և շրջապատող տեղական առարկաների նկատմամբ:

1. Հյուսիսի ուղղութիւնը վորոշելը ժամացույցի ոգոււթյամբ.


1) Ժամացույցը դիր ձեռքիդ վրա հորիզոնական դրութեամբ և դարձիր այնպիս, վոր ժամացույց տվող սլաքն ուղղված լինի դեպի արեգակը:

2) Ժամացույց տվող սլաքի և թվատախտակի «12»-թվի միջև յեղած անկյունը կիսիւր, այդ անկյունը կիսող գիծը կլինի «միջօրեայի գիծը», վորն

իր ծայրով ցույց է տալիս հարավը, իսկ այդ գծի շարունակութեան մյուս ծայրը ցույց է տալիս հյւսիսը:

3) Յեթե ժամացույցով վորոշելու աշխատանքը կատարում ես մինչև ժամի 12-ը, ապա պետք է վերցնես այն անկյունը, վոր կազմված է արեգակին ուղղած սլաքի և թվատախտակի «12» թվի ուղղութիւններով:

4) Յեթե վորոշելու աշխատանքը կատարում ես ցերեկով ժամի 12-ից հետո, ապա պետք է վերցնես այն անկյունը, վոր կազմված է թվատախտակի «12» թվի և արեգակին ուղղած սլաքի ուղղութիւններով:




Վերահսկողութեան միջոցով վորոշելու հարցը լուծելու համար 2. Հարցի վրա ցուցաբերված գծերը ճշգրտելու համար

2. Հյուսիսի վորոճելի աստղերի ուղևորյամբ.

5) Յեթե գիշերն աստղալից ե, փնտո՞րք է գտիր Մեծ արջի և Փոքր արջի համաստեղությունները:

Այդ համաստեղություններից ամեն մեկը բաղկացած է յոթ աստղից, վորոնք կարծես թե նման են շերեփի: Մեծ արջի համաստեղությունը կարծես թե նման է մի շերեփի, վորի հատակը ուղղված է դեպի ցած, իսկ փոքր արջինը ուղղված է դեպի հյուսիս:



Գծանկար 3. Հյուսիսի վորոճելի աստղերի ուղևորյամբ:

լին աստղը ցույց լտա ինչպիսիք ուղևորյամբ (գծանկար 3):

6) Մի չերևակայական գիծ անցկացրու Մեծ արջի շերեփալիսի ծայրի չերկու աստղերի վրայով և այդ գիծը շարունակի դեպի վեր: Իր ճանապարհին այդ գիծը կհանդիպի Բեվեռային աստղին, վորը Փոքր արջի շերեփալիսի վերջին աստղերի ուղևորյամբ:

հյուսիսի ուղևորյունը.

3. Հյուսիսի վորոճելի . սեղական առարկաների ուղևորյամբ.

ա) Քրիստոնեական (որոսական և հայկական) չեկեղեցիները բնմը միշտ ուղղված է լինում դեպի արևելք.

բ) Կաթոլիկական չեկեղեցիների բնմն ուղղված է լինում դեպի արևմուտք.

գ) Մեջիդաների մուտքն ուղղված է լինում դեպի հարավ.

դ) Կտրած ծառերի կոճղերի վրա փայտի տարեկան շերտերը հաստ և նոսր են լինում հարավային կողմում:

ե) Առանձին ծառերը, կոճղերը և քարերը մամուռով ծածկված են լինում հյուսիսային կողմից.

զ) առանձին ծառերի ճյուղերն ու տերևները շատ հաճախ խիտ են դասավորված լինում հարավային կողմից:

ը) առանձին շենքերի պատերին և ծառերին ճյունը կպած է մնում հյուսիսային կողմից:

4. Քարտեզի կողմորոշումը,

Մեր կանգնած կետը տեղում վորոշելու համար ամենից առաջ հարկավոր է կողմորոշել քարտեզը,

այլ խոսքով քարտեղի կազմի կարվածքը (աշխարհագրական միջոցնականը) պետք է ուղղել գեպի հյուսիս:


7) Հյուսիսի ուղղութիւնը վորոշելուց հետո քարտեղի կողքի շրջանակն ուղղիւր գեպի հյուսիս:

8) Յեթե կողմացուցց ունես ապա կողմացուցցը դիր քարտեղի վրա այնպես, վոր կողմացուցցի հասակի հոսիս հարսվ յիծը համընկնի քարտեղի կողքի շրջանակի վրա, այլ գեպում կողմացուցցի C կամ N տառը պետք է ուղղված լինի գեպի քարտեղի շրջանակի վերին կողմը:

9) Ազատելով կողմացուցցի սլաքի ծայրը. քարտեղը դարձրու այնպես, վոր սլաքի հյուսիսային (կապտադրած) ծայրն համընկնի C կամ N տառերին. այն ժամանակ քարտեղը կողմորոշված կլինի տեղանքի նկատմամբ:

10) Տարական առարկաների ոգնութիւնը քարտեղը կողմորոշելու համար (դրա համար պետք է ի անալ իր կանգնած կետը քարտեղի վրա) փընտոր տեղանքում 2—3 հատ բավականաչափ հեռու գտնվող առարկաներ, վորոնք նշանակված են քարտեղում, ապա քարտեղն այնպես դարձրու, վոր ընտրածդ առարկաների ուղղութիւնները բոտանդնամ կետից համընկնեն նույն առարկաների կողմութիւններին քարտեղի վրա (գծանկար 4):

11) Յեթե գտնվում ես խճուղու կամ լերկաթգծի վրա, ապա կողմորոշիր քարտեղը դրանց ոգնութիւնք. դրա համար քարտեղը դարձրու այնպես վոր լերկաթգծի կամ խճուղու ուղղութիւնը



Գծանկար 4. Քարտեղի կողմորոշումը տեղական առարկաների ոգնութիւնք:

քարտեղի վրա համընկնի դրանց ուղղութիւններին տեղանքի վրա. միևնույն ժամանակ հետևիւր, վոր, որինակի համար, լերկաթուղու կամ խճուղու գծի ձախ կողմում տեղանքի վրա գըտնված առարկաները քարտեղի վրա ես գտնվեն նույն (ձախ) կողմում:

5. Կանգնած կեցի վորաբէյլ.

12) Կանգնած կետը վորոշելիս, նկատի ունեցիր, վոր ավելի մեծ ճշտութեամբ այդ կարելի լի անել կործիքներն ոգնութեամբ (ստերիտիտակ, բուստոլ, կիպրեգել և այլն, տես շարունակութեան մեջ «հետախուզը մարտում»), բայց կարելի չի վորոշել նաև քարտեզով, առանց գործիքներէ, քարտեզը տեղանքի հետ համեմատելով, թեև այս յեղանակով ավելի փոքր ճշտութեան ենք ունենում:

13) Քարտեզի վրա կանգնած կետը վորոշելիս, պետք է քարտեզը կողմորոշել և կանգնած կետից մտտիկ գտնել քարտեզի և տեղի վրա մի պարզ լերևացող առարկա՝ գլուղ, բարձունք և այլն:

14) Քարտեզի վրա արդեն գտած կետից, հաշվի առնելով քո հեռավորութեանն ու ուղղութեանն այդ առարկայից, վորոշիր կանգնածդ տեղը:

15) Յեթե քարտեզի և տեղի վրա չես գտել կետ, ապա կանգնածդ կետը վորոշիր հետևյալ պարզ լեղանակով՝

ա) Պլանշետի վրա թափանցիկ թուղթ փակցրու և թղթի մեջտեղում նշանակիր մի կետ, վորը և համարիր քո կանգնած կետը.

բ) քանոնը դիր այդ կետի վրա և քանոնը տարադիտիր դեպի տեղի վրա ընտրած առարկաներից մեկը և մատիտով գծիր այդ ուղղութեանը. նշանակիր այդ առարկայի անունը.

գ) առանց պլանշետը շարժելու, քանոնը դիր նույն կանգնածդ կետի վրա և տարադիտիր դեպի չերկրորդ ընտրածդ առարկան և նորից գծիր այդ ուղղութեանը, նշանակիր չերկրորդ առարկայի անունը. նույն կերպ վարվիր չերկրորդ առարկայի նկատմամբ.

դ) պլանշետի վրայից հանիր թափանցիկ թուղթը, դրա վրա գծած չերեք ուղղութեաններով կազմած անկյան գաղաթով և դիր քարտեզի վրա.

յե) թուղթը շարժիր այնպես, վոր նրա վրայի գծերը՝ դեպի առարկաները ցույց տվող ուղղութեանները համընկնեն քարտեզի վրայի նույն առարկաներին. յերբ թղթի գծերը լիովին կհամընկնեն առարկաների ուղղութեաններին վրա, կարկինով կամ գնդասեղով ծակիր անկյունի գագաթը: Ծակելուց հետո քարտեզի վրա ստացված կետը կլինի քո կանգնած կետը:

VI. ՀԵՏԱԽՈՒՅՁԸ ՄԱՐՏՈՒՄ.

Մարտում հակառակորդին պետք է հետախու-

զել անընդհատ կերպով, ամբողջ մարտի ընթացքում, ամեն մի հրետանային դիտակետից: Նույնպես անընդհատ կերպով պետք է կապ պահպանել իր տեղամասի հետևակի հետ. հետևակը վո՞ն մի ըոպե չպետք է կորչի հրետավոր — հետախուզվել տեսողութան դաշտից:

1) Յեթն դիտակետում ներկա գտնվողների մեջ հսկայիսմունմ ես իբրեւ ավագ, ապա դիտակետի ծառայութեան բոլոր պարտականութիւնները ճշտորեն բաշխելը դիտակետում գտնվող անձանց միջև, վոր ապահովված լինի հակառակորդին անընդհատ կերպով հետախուզելու և հետևակի հետ կապ պահպանելու աշխատանքը: Քեզ վրա վերցրու ըր դիտակետի վրա դրված ամենագլխավոր խնդրի կենսագործումը:

2) Յերե դու ուղարկված ես դեպի մեզ դասավորութեան բեկը նախազգուշացնելու համար հակառակորդի անակընկալ կամ սղա-քիմիական հարձակման վտանգի մասին, ապա բոնիր քեզ մատնանշած պունկտը, քողարկվիր, տեղանքին հարմարվելով, ուշադրութեամբ դիտողութեուն ունեցիր քեզ մատնանշած ուղղութեան վրա և սերտ կապ պահպանիր կրակային դիրքի հետ, ոգտվելով վաղորոք պայմանավորված ազդանշաններով:

3) Հակառակորդի կողմը դիտելու ժամանակ քեզ համար ճշտութեամբ պարզիր ըր տեսածիրի սեղտորը (վայրի տեղամասը) և ուշադրութեամբ ուսումնասիրիր այդ տեղամասի վայրը: Իրա համար, կողմորոշելով քարտեզը, վորոշիր ըր կանգնած տեղը և ծանոթացիր առանձնապես աչքի ընկնող տեղական առարկաների, ճանապարհների, բլուրների հետ. նշելով դրանց տեղանքում, գտիր քարտեզի վրա այդ առարկաները և մտքիդ պահիր, այնուհետև, քարտեզի վրա գտիր տեղանքում քեզ հետաքրքրող առարկան: Վորպեսզի ավելի պարզ լինի, քեզ հանձնված տեղամասը գծիր գունավոր մատիտով: Ուշադրութեամբ ուսումնասիրիր այն ճանապարհները, վորոնք հակառակորդի թիկունսից բերում են դեպի նրա առաջավոր դրամասերը:

4) Յերե հայտարեես հակառակորդի մի վորևե գորամաս կամ խումբ, աշխատիր. հնարավորին յափ, մեծ ճշտութեամբ քարտեզի վրա վորոշել նրա գտնված տեղը, նրա քանակը, նրա գործողութեունների բնույթը և մտադրութեունները:

5) Հակառակորդի յերապուներ հայտարեելիս նրա բացազատման սկզբում, վորը շարժվում է մեր հրետանու հասողութեան սահմաններից դուրս,

աշխատիր պարզել՝ ա) վոր ճանապարհով, վորտեղից և ուր և զորասյունը շարժվում, բ) զորասյունի լեռնայնությունը, գ) զորքերի տեսակը, դ) նրա բացազատման սկիզբը: Յեթե զորասյունի կազմի մեջ մտնում և հրետանի, ապա ուշադրություն դարձրու, թե հրանոթների լուծքերը քանի հորիկ ունեն, վորպեսզի վորոշվի հրետանու հզորությունը: Հետևի՛ր կարճ ժամանակով յերևացող հրետանային լուծքերին, յերբեմն դրանց ոգնություն մարտկոցի կրակային դիրքի կամ քարշակների տեղը:

6) Լավ ուսումնասիրի՛ր ստորև բերված տախտակը (աղյուսակը), վորով վորոշվում և զորասյունի մոտավոր քանակը ըստ այն ժամանակի, վորի ընթացքում զորքերն անցնում են մի վորև և կետի մոտից:

(Աղյուսակը տես հաջորդ էջում)

Զորքերի տեսակը	Զորամասի անունը	Անցնելու ժամանակը
Հետևակ	Քառաշար սյունով անցնելիս՝	
	Տվյալ կետի մոտից վաշտն անցնում և	2 րոպե
	Տվյալ կետի մոտից գումարտակն անցնում և	8 »
	Տվյալ կետի մոտից գունդն անցնում և	35 »
Հեծելազոր	Յեռաշար սյունով շարժվելիս՝	
	Եսկազրոնը քայլով անցնում և	1 »
	» վարզով անցնում և	1/2 »
	Գունդը քայլով անցնում և	15 »
» վարզով անցնում և	8 »	
Հրետանի	Հրանոթասյունով շարժվելիս՝	
	Մարտկոցը (4 թնդանոթ) քայլով անցնում և	10 »
	Դիվիզիոնը (3 մարտկոց) քայլով անցնում և	30 »

7) Գնդացիներն աշխատիր հայտարարել մինչև նրանց մարտի բռնվելը, վորոշի՛ր նրանց դասա-վորման տեղը և խմբավորումը: Նկատի ունեցիր,

վոր բաց դիրքում տեղավորված կամ թևի կողմից յերևացող կրակոց գնդացիները կարելի չե հայտարարել այն հաղիվ հաղ նկատելի չերերուն սպիտակ ծխի հետքով, վորն արագորեն ցրվում է ուրի մեջ:

8) Գնդացիոր խառնասում հայտարարիչ հետևյալ հատկանիշներով:

ա) մեծ ըլինդաժ լայն մութ ճեղքով՝ հրակնատով.

բ) գնդացի մոտերքում ավելի շատ քանդած հանած հող ե լինում, քան այլ տեղերում.

գ) արհեստական խոչընդոտներն գնդացրային ընների առաջ չերբեմն ավելի ցածր են լինում, լոր գնդացիքն ազատ գնդակոծ ունենա:

9) Տանկային գրոհի նախապատրաստությունն ամենից ավելի հեշտ է հայտարարել, շնորհիվ նրանց շարժիչների (մոտորների) հանած առանձնահատուկ աղմուկի, լսելով այդ աղմուկը գիշերով կամ ցերեկով, փորձիք վորոշել այն տեղը, վորտեղ տանկերն են կուտակվում: Նկատի ունեցիք, վոր հակառակորդը բոլոր միջոցներով՝ հրետանային ուժեղ հրաձգությամբ, ինքնաթիռի պրոպելլերի հանած աղմուկով և այլն, ձգտում է խլացնել շարժիչների հանած աղմուկը:

10) Գազաբալոնային գրոհի նախապատրաստությունը վորոշիք այն սայլերի և բեռնակիր ավտոմեքենաների շարժումների ուժեղացումով հակառակորդի ամենամոտ թիկունքում, վորոնք գազաբալոններ են կրում, բալոնների հանած մետաղա զրնդոցով և նրանց տեղավորելու պատճառով սկսված ուժեղ անցուղարձով, վորը տեղի չե ունենում գիշերով կամ լուսարացին, այլ և այն թեք և հոտով, վոր քամին է բերում հակառակորդի խրամատներից, շնորհիվ նրա, վոր գազը բալոններից դուրս է գալիս:

11) Գազաբալոնային գրոհի սկիզբը կարելի չե վորոշել հակառակորդի խրամատներում սկսված ուժեղ աղմուկով և շարժումներով, բալոններից դուրս յեկող գազի հանած աղմուկով և շվոցով, զուհավոր հրթիռներով, վոր հակառակորդը բաց է թողնում իր զորքերին զուգացնելու համար պատրաստվող գրոհի մասին և վելջապես պարզ չերեվացող գազի առանձին հոսանքներով, վորոնք արագորեն միաձուլվում և կաղմում են խիտամպ (յեթե դա անգույն գազ չէ). ուշադրությամբ հետևիք այս հատկանիշներին:

12) Հակառակորդի հրետանային դիտակետերը կարելի չե վորոշել յերևացող և նորից անհետացող

մարդկանց կերպարանքներով կամ նրանց գլուխներով, այն կապավորներով վորոնք հեռախոսաթիւ են անցկացնում կամ շտկում, ստերեոդիտակները կամ լերկզիտակները ապակիները պրսպողոցով, այս հատկանիշներից մեկնումեկը հայտնաբերելուց հետո այդ տեղը բաց մի թող քո դիտողութունից:

Յեթե դիտակետը ծառի վրա չի, ապա այդ կարելի չի վորոշել ծառի բնի վրա խփած աստիճաններով կամ սանդուխքով, դրանցով իջնող կամ բարձրացող դիտողներով, չերբեմն ել վատ քողարկված դիտելու հարթակներով: Ավելի լերկաբատն դիտողութւան ժամանակ հակառակորդի դիտակետի ներկայութունը կարելի չի վորոշել կրկնվող շարժումներով՝ որինակ, սննդի մատակարարումով, դիտողների փոփոխումով և այլն:

13) Հագնակորդի կրակային դիրքեր հայտարարելու համար ցիբեկով, դարձրու գլուխը դեպի ձիգերի ուղղութունը և նայելով այն կողմը չզինված աչքով, նկատիր ուղիղ առջիդ հակառակորդի դասավորութւան մեջ մի վորեւ կես ախուհետև ուշադրութւամբ նայիր ստերեոդիտակով կամ լերկզիտակով ուղիղ այդ կետին, առանց հայացքդ աջ կամ ձախ փոխելու, սպասիր ձիգի ձայնին:

յեթե նշված կետից աջ կամ ձախ կողմում ձիգ չի լսվի, ապա հայացքդ տեղափոխիր մի նոր ուղղութւան վրա, վորը քեզ ավելի ճիշտ ե թվում նորից նշիր մի կես և նայելով այդ կետին, նույնպես սպասիր ձիգի ձայնին:

Միմիայն այն ժամանակ, չերբ համոզվես, վոր ձիգերը չեն լսվում նշված կետից այս կամ այն կողմում, ապա առանց փոխելու ստերեոդիտակի կամ լերկզիտակի խաչկապը, դիտիր (նրանց տեսադաշտը և աշխատիր վորսալ մարտկոցի կրակային դիրքը գտնելու հետևյալ հատկանիշները՝ ձիգերի փայլը (յեթե մարտկոցը կանգնած ե բաց դիրքում), ձխի կիսաթափանցիկ ողակները կամ հաղիվ նկատվող հոսանքները, ձիգերից բարձրացած փոշին, արկերի պատահական վաղաժամ պայթյունները հրանոթների մոտերքում:

14) Գիշերով մարտկոցը կարող ես հայտնաբերել անգեմ աչքով: Դրա համար ձիգերի ուղղութւանը հատիր հետևյալ ձևով՝ քեզնից մոտ մեկ մետր հեռու առջևումդ խփիր 30—50 սանտիմետր բարձրութւան և մատի հաստութւան բաց դույնի մի ցից՝ այնուհետև վերցրու մոտ 20 սանտիմետր լերկարութւան ձիպոտ և նկատելով ձիգի բոցը կամ փայլը, ձիպոտը խրիր գետնի մեջ այնպես, վոր մի գծի (ծածկորդի) վրա

լինի ցցի կամ ձգի բոցի (փայլի) հետ, հետո՛յալ ձիգերի ժամանակ ստուգելը թե արդյոք ճիշտ ես հատել:

15) Նկատածդ բոլոր ելական նշանակությունն ունեցող բաների մասին զեկուցիր հրամատարին՝ առանց դիտողութունն ընդահատելու. զեկուցիր հակիրճ և ճիշտ, որինակ՝ «մեր գնդացիքը կլոր թփի մտից անցնում է դեպի առաջ և աջ», կամ «տեսնում եմ դիտակետը՝ ջրաղացից 0—80 ձախ և 0—10 ցածր, չեղևնու ծառի տակ ավազոտ թրմբի վրա»:

16) Քննարկություններ փնտրելիս հրանց դրութունը գնահատիր նոր նպատակի նկատմամբ. յեթե այդ նպատակը քեզ հայտնի չի, կողմորոշի (որիցնե՞տիր) կամ մի վորևե պարզ չե՞րևացող տեղական առարկայի նկատմամբ, ապա, մոտավորապես այսպես զեկուցիր հրամատարին՝ «պայթյունը կարմիր կաուրից 0—30 աջ է և 0—07 բարձր է»:

17) Կրակը նշելիս առաջավոր կամ կողքի դիտակետից պայթյունների դրությունը գնահատիր միշտ դիտողության գծի նկատմամբ (դիտող-նպատակ) և մոտավորապես այսպես զեկուցիր հրամատարին՝ «չերկուսը ողային, մեկը պլյուս կլևոկ

(գետնաշուկի պայթյուն) կամ մեկը կլևոկ մինուս, յերկուսն ողային 0—30 դեպի աջ»:

VII ՀԵՏԱՆՈՒՉՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆ

Հետախուզության մատյանը տարվում է հրամատարական դիտակետում պաշտպանության ժամանակ կամ հակառակորդի ամրացրած շերտը ճեղքելու պատրաստության ժամանակ: Դիտակետում ներկա յեղողներից ավագը այդ մատյանում գրի չե առնում հակառակորդի կողմում նկատված բոլոր ելական բաները (տես աղյուսակը):

(Տես աղյուսակը հաջորդ էջում)

Մասյան հետախուզության

105-րդ հրետգնդի 3-րդ մարտկոցի.

Քվեական	Յ ե Ր Բ				Վորտեր		Ինչ է նկատված	Ով էր հետա- խուզություն կատարում
	ամս	իվթիս	ժամ	րոտ	Նպատակը	Նշանակությունը		
1928	5	28	15	35	—	32 — 48	Մեծ անտառի ծայրում յերևում է նորից ծածկվում են առանձին մարդիկ, հավանորեն բանվորներ են, կարծես թե փակոցներ են շինում:	Մարտկոցի հրամանատարը
			15	50	21		Սև թփի մոտի զխառկետում նորից ապակիներ են պսպղում:	Ուսանյալ

VII ՀԵՌԱՏԵՍԻՆ ԳԾԱՆԿԱՐ

Տեղանքի հեռառեսիլ գծանկարը վայրի մի այնպիսի պատկերն է, վրբը նման է մի վորտե բարձր

տեղից. որինակ զիտանոցից սարից և այլն հանած լուսանկարին, Հեռառեսիլ գծանկարների և լուսանկարների միջև յեղած տարբերությունն այն է, վոր գծանկարի մեջ մենք կարող ենք ավելի ցայտուն կերպով նկարել այն առարկաները, վորոնք լուսանկարի մեջ պարզ չի դուրս գա և ընդհակառակը, կարող ենք ամենին չնկարել այն մանրամասնությունները, վոր միայն խճճում են տեղանքը, բայց վոր մեզ համար վոչ մի հետաքրքրություն չեն ներկայացնում:

Հեռառեսիլ գծանկար գծագրելու համար չի պահանջվում նկարչի վարպետություն, հարկավոր է աչքաչափ և ճշտություն տեղանքը թղթի վրա փոխանցելու ժամանակ, Գծանկարը գծագրելիս հարկավոր է՝

1) պլանշետի վրա փակցրած թղթի վրա թեթև կերպով գծել անկյունաչափալին ցանցը անկյունաչափի ամեն մի 0 — 50 բաժանումից հետո, վոր պեսզի գծանկարը գծես յոտավոր մասշտաբով: Այնուհետև տեղավորվելով մի հարմար կետում և ոգտվելով յերկրիտակից, թղթի վրա նկարի առջև մեղ ընկած տեղանքն (կամ նրա հարկավոր տեղամասը) — այնպես, ինչպես տեղանքը պատկերվում է քիզ քո տեղից, համապատասխան ձևով

փոքրացնելով հետու գտնված առարկաների և ուր-
լեֆի չափերը:

2) Աշխատանքի սկզբում տեղամասի կենտրո-
նում ընտրելը մի վորհե առանձին, լավ և պարզ
չերեացող տեղական առարկա և նկարիչը այն
թերթի մեջտեղում դա կլինի հիմնական որիչն-
տիրը, վորը նշանակելը 30—00 թվով:

3) Յերկդիտակի կամ ստերեոգիտակի ոգնու-
թյամբ չափիլ մյուս տեղական առարկաների շե-
ղումը այդ որիչնտիրից, որինակ ձանապարհների
խաչմերուկները, անտառի ծալրերը և պարզորեն
գծագրվող բարձունքները, և ոգավելով ցանցի
մասշտաբից, այդ բոլոր առարկաները փոխանցիլը
գծանկարի վրա. այդ առարկաներից սվելի աչքի
ընկնողները վերեից կետագծեր դուրս հանիլը վե-
րև և նշանակիլը դրանց ունեցած շեղումը հիմնա-
կան որիչնտիրից՝ 30—00-ից, անկյունաչափի
բաժանումներով արտահայտած:

4) վորպեսզի ըր գտնված կետից կատարած
գծանկարից ամեն մեկը կարողանա ոգավել, գծիլը
վայրի այն տեղամասի համառոտ սխեման (այս-
ինքն, վերեից յերեացող տեսարանը), վորտեղից
նկարել ես հեռատեսիլ գծանկարը: Դրա համար
գծանկարը կողմորոշիլը յեռանկյունածև քանոնի

ողնու թշամը ըստ հիմնական որիչնտիրի և կող-
մնացույցը գծելով գծանկարի վրա, գծիլը դեպի
հյուսիսի ուղղությունը. այնուհետև, առանց գծա-
նկարը շարժելու՝ տարագրիլը դեպի 2—3 առար-
կա վորոնք գտնվում են ըր կետից աչ ու ձախ
կողմում, յետևում. կետագծով ցույց տուր դեպի
նրանց կողմը յեղած ուղղությունը և նկարիլը
նրանց արտաքին տեսքը (ծառ, ջրաղաց, ջրհոր)
և թվանշանով ցույց տուր նրանց հեռակաչու-
թյունը. բացի դրանից, աչքաչափով գծիլը ճա-
նապարհների ուղղությունը, անտառի կոնտուրը
(ուրվագիծը), իսկ յորիզոնականներով՝ ցույց տուր
ըր շուրջը յեղած ուրլեֆը: Սխեման կարող ես
նաև առաջուց փոխանցել քարտեզից, մատնանը-
շելով մասշտաբը:

5) Չմոռանաս գծանկարի տակ ստորագրելու
ազգանունդ, պաշտոնդ և ցույց տալու այն դրու-
թյունը, վոր գծանկարել ես (կանգնած, նստած-
կամ պռկած), նույնպես և ամսաթիվը, այսինքն,
թե յերբ և գծանկարը նկարված:

IX ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԽԵՄԱՆ

Այս սխեման գծագրվում է նրա համար, վոր
պարզ կերպով ցույցադրվի հակառակորդի կողմում

հայտարարված նպատակները դասավորութիւններ, վոր առաջուց հայտարարված նպատակը չնդունենք իբրև նոր չերևացած նպատակ կամ բաց չթողնենք նոր չերևացած նպատակը:

1) Պլանշետի վրա փակցրած մի թերթ մաքուր թղթի վրա դիր մի կամայական կետ և այդ կետն ընդունիր իբրև քո դիտակետը:

2) Գծիր տեղանքում և քարտեզի վրա յեղած որիյնատիրի ուղղութիւնը, նկարիր նրա տեսքը կամ գրիր նրա անունը (զանգազատուն, ծխնելույղ, ջրաղաց և այլն) և նշանակիր այն անկյունաչափի շրջանի 30—00 թվով:

3) Հայտարարելով նպատակը, չափիր նրա շեղումը որիյնատիրից, անկյունաչափի բաժանում ներով արտահայտած և վորոշիր մինչև այդ նպատակն յեղած հեռակայութիւնը:

4) Սխեմայի վրա գծիր դեպի այդ նպատակը յեղած ուղղութիւնը. ցույց տալով նրա շեղումը հիմնական որիյնատիրից և մինչև այդ նպատակն յեղած հեռակայութիւնը:

5) Այդ ուղղութիւն վրա պայմանական նշանով գնազրէր նպատակը և համարակալիր այն:


6) Հետևիր, վոր սխեմայում նպատակները միմիանց և որիյնատիրի նկատմամբ դասավորվեն

այն գետ, ինչպես նրանք դասավորված են տեղանքում. յիթե որինակ, № 3 նպատակը տեղանքում չերևում և № 2 նպատակից ավելի ձախ և ավելի մոտիկ, ապա այդպես էլ նա պետք և ցույց տրված լինի նաև սխեմայում:

7) Ուշադրութեամբ գննիր հայտարարված նպատակի չորս կողմի տեղանքը, յիթե այդ նպատակի մոտերքում բնորոշ տեղական առարկաներ կան որինակ, ճանապարհներ, անտառի ծալքեր, գետեր, վտակներ և այլն, ապա սխեմայում նշանակիր նրանց դրութիւնը նպատակի նկատմամբ:

8) Վորպեսզի բեղնից ավելի բարձր պետք հայտարարված նպատակները կարողանա քո սխեմայից փոխանցել իր ընդհանուր սխեմայի կամ քարտեզի վրա, ուստի կողմորոշելով սխեման ըստ հիմնական որիյնատիրի՝ 30—00-ի, սխեման տարադիտիր դեպի 2—3 տեղական առարկա (անտառի անկյունը, ճամբաների խաչմերուկ և այլն), վոր կան քարտեզում, գծիր զբանց ուղղութիւնները և ցույց տուր այդ առարկաների հեռակայութիւնը: Այնուհետև գծազրէր շրջապատող տե


դանքի համառոտ սխեման և գծերը դեպի հյուսիսի ուղղություները (գծանկար 5.):



Գծանկ. 5 նպատակների սխեման

9) Նպատակների փոխանցումը սխեմայի վրա կարելի չե հեշտացնել, վաղորդ պատրաստելով սխեմայի վրա սեկտոր (ցանց)՝ դիտակետի կանոնադրված կետից տարածետ (միմիանցից հեռացող) շառավիղներով, միջին շառավիղից՝ որիցնտիրի ուղղություներից դեպի աջ ու ձախ, յուրաքանչյուր,

շառավիղն անցկացնելով ամեն մի 0—50 բաժանումից հետո, այնուհետև սխեմայի մասշտաբի համաձայն ամեն մի 500—1000 մետրից հետո կանգնածը. կետից անցկացրու կիսաշրջաններ, վորոնք ցույց են տալիս հեռակայությունները. նպատակներ հայտարերելու դեպքում նշանակիր դրանց սխեմայի վրա արդեն պատրաստված սեկտորի (ցանցի) մաշտաբով (գծանկ. 6):



Գծանկ. 6 նպատակների սխեման.

10) Այն դեպքում, յիբը նպատակները տեղանքում մեկը մյուսից խիստ մոտ են դասավորվում. վորպեսզի ցանցի մի վորևե մասը շատ չխճողվի նպատակներով և որիյինտիրներով, մի պահպանիր մասշտաբն ըստ հեռավորության և ըստ անկյունաչափի, այլ պահպանիր այն կանոնները, վոր մատնանշված են 6-րդ կետում:


X. ՄԱՐՏԿՈՑԻ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

Մարտկոցի դասավորման սխեման գծազրելու համար կատարիր հետևյալը՝

1) Թափանցիկ թուղթ փակցրու քարտեզի վրա և քարտեզից այդ թափանցիկ թղթի վրա փոխանցրու ամենից ավելի աչքի ընկնող և կարևոր առարկաների պայմանական նշանները, վոր կան մարտկոցի դասավորման ռաշոնում (կրակային դիրքի կամ դիտակետի ռաշոնում), ինչպես որինակ, ճանապարհները, անտառները, պուրակները պարզորոշ նշանակելով անտառների յեզրերը և տեղական առարկաները:

2) Հորիզոնականների կտորներով նշանակիր բարձրունքները, իսկ աջուհետև դժիր դիտակետերի, կրակային դիրքերի և քարշակների գտնված տեղերը:

3) Առանց քարտեզից ընդոր նշանները փոխանցելու, և սխեման նշաններով խճճելու, աշխատիր ամեն մեկին հնարավորութուն տալ հասկանալու քո նկարած սխեման և մարտկոցի կամ դիտակետի գտնված տեղը սխեմայից փոխանցելու քարտեզի կամ մարտկոցի, դիվիզիոնի և գնդի ընդհանուր սխեմայի վրա (գծանկ. 7):



Գծանկ. 7 Մարտկոցի դասավորման սխեման.

XI ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎՈՐՈՇԵԼ ԴԻՏԱԿԵՏԻ ԿԱՍ
ՀՐԱՆՈՒԹԻ ԳՏԵՎԱԾ ՏԵՂԸ (ԿԵՏԸ)

Դիտակեցի կամ հրահրի զՏՆՎԱԾ ՏԵՂԸ ԿԱՐԵԼԻ
յԵ ՎՈՐՈՇԵԼ ԿԵՏԵՐԻ ԿԵՏԵՐԻ ՆՈՐՈՇԵԼ ԿԵՏԵՐԻ

ա) ՅԵՐԵՄԻԱՅԻ ԿԵՏԵՐԻ ՈՂՆՈՒՅՄԱՐ ՎՈՐՈՇԵԼ ԳՈՅՈՒՅՄՈՒՆ
ՈՒՆԵՏ ԵՏԵՂԱՆԲՈՒՄ ԵՏԻ ԵՏԵՂԱՎԱԾ ԵՆ ԲԱՐՏԵԳԻ ՎՐԱ:

1. Հասարակ բուստը կամ ստերեոպիտակը,
30—00 ուղղիւր մի վորեւ կետի (որինակ հողմա-
ղացի), վորի զրուծուցը լավ հայտնի յԵ քար-
տեղի վրա, այնուհետև նշադրվիւր մյուս յերկու
կետերի (զանգակատան և գործարանային ծխնե-
լույզի) նկատմամբ և զրի առ ստացված նիշերը
(հողմաղացին 30—00, զանգակատանը 38—50, և
ծխնելույզին 17—20):

2. Յնլուրտիդե բոլորակը զիր քարտեղի վրա և
տեղափոխիւր այնքան, մինչև վոր բոլորակի յերրի
սանդղակի բաժանումները, վորոնք համապատաս-
խանում են ստացված նիշերին, համընկնեն քար-
տեղի վրայի համապատասխան կետերին:

Այդ յերեք ուղղութիւնները կարելի յԵ գծել
Թափանցիկ թղթի վրա, և ցանկացած կետից
գծած կամայական գծից աջ ու ձախ (հողմաղացի
ուղղութիւնից՝ 30—00-ից) ցույց տալ յերկու
ստացված անկյունները աջ կողմում մի անկյունը

(զեպի ծխնելույզը 12—80) և ձախ կողմում մյուս
անկյունը (զեպի զանգակատան 8—50): Յեթե
զրանից հետո (նույն յեղանակով, ինչ և նախորդ
զեպում) այլ յերեք կետերը համընկեցնել զրանց
համապատասխանող քարտեղի վրայի կետերին և
ասեղով ծակել անկյունների զազաթների վրայից,
ապա քարտեղի վրա կստացվի այն կետը վորը
փնտռում ենք:

բ) Յերկու կետերի ողնուքամբ, վորոնք գոյութուն
ունեն յեղանակում յեվ ԵՏԵՂԱՎԱԾ ԵՆ ԲԱՐՏԵԳԻ ՎՐԱ:

1. Հասարակ բուստը, թուլացրու մագնիսային
սլաքի արգելակը (տորմոզը) և զարձնելով ան-
կյունաչափային բոլորակը համընկեցրու սլաքի
հուսիսային ծայրը բուստի «Օ» բաժանու-
մին. զրանից հետո նշադրվիւր բուստով այն
յերկու կետերի նկատմամբ, վորոնք կան նաև
քարտեղի վրա:

2. Հիշիւր, (զրի առ) ստացված նիշերը և ապա
վարվիւր այնպես, ինչպես և նախորդ զեպում
(այսինքն, ոգտվիւր ցնլուրտի բոլորակով կամ
Թափանցիկ թղթի վրա գծիւր ստացված անկյուն-
ները), միայն այն տարբերութամբ, վոր զեպի
յերրորդ կետը յեղած ուղղութիւնը կարող Ե ՓՈ
խարիսկի զեպի հյուսիս ցույց տվող ուղղութամբ


(բորորակի «Օ» բաժանումը դիպի հյուսիս), վորը բորորակի կամ թափանցիկ թղթի դարձնելու դեպքում շարունակ գուգահեռական դրությամբ պահիր քարտեզի կողքի շրջանակի նկատմամբ:

3. Այդ ժամանակ մի մոռանար մագնիսային խոնարհման մասին (յերկրի աշխարհագրական և մագնիսային բևեռները չեն համընկնում միմիանց հետ, ուստի աշխարհագրական և մագնիսային միջորեականների միջև կաղմվում և մի անկյուն, վորը կոչվում է մագնիսային խոնարհում. նայած մագնիսային խոնարհմանը աշխարհագրական միջորեականից դեպի արևելք կամ դեպի արևմուտք, մագնիսային խոնարհումը լինում է արևելյան կամ արևմտյան):

Անկյունները տեղանքի վրայից քարտեզի վրա փոխանցելիս, արևելյան խոնարհումը գումարի ր փոխանցվող անկյունի մեծության վրա, իսկ արևմտյան խոնարհումը հանիր, անկյունները քարտեզի վրայից տեղանքի վրա փոխանցելիս, արա ընդհակառակը (գծանկ. 8):

Բուստղը = 15 — 00, արևելյան խոնարհումը = 2 — 00:

Քարտեզի վրա փոխանցելիս անկյունը = 17 — 00:




Գծանկ. 8 մագնիսային խոնարհում:

XII ՆՊԱՏԱԿԻ ՀԱՏՈՒՄՆԵՐԸ


(Գծանկ. 9, 10, 11).

1) Նշանակիր քարտեզի վրա յերկու կողքի դիտակետեր կամ մեկ հրամատարական և մեկ կողքի դիտակետ:



Գծանկ. 9. Նպատակի հատումները.

2) Նշանակիր յերկու դիտակետերից լեռնացող ընհանուր որիցնետրերի գտնված տեղը յեթե ընդհանուր որիցնետիր չկա, ապա նշանակիր յերկու առանձին որիցնետրերի գտնված տեղը, յեթե




Գծանկ. 10 Նպատակի հատումները.

դիտակետերը միմիանց տեսնում են, ապա պարտադիր չե որիցնետրը նշնել քարտեզի վրա, վերովհետև դիտակետերը մեկը մյուսի համար ծառայում են իբրև որիցնետիր:

3) Յերկու դիտակետերից ել ստերիոգրատակով կամ Բուսոլի անկյունաչափային բոլորակով 30—0 գիծն ուղղիր դեպի հիմնական որիցնետրը կամ որիցնետրները, չափիր դեպի դրանց և դեպի նպատակի ուղղությունների միջև յեղած անկյունները:

4) Քարտեզի վրա գծիր հետևյալ ուղղութիւնները՝ դիտակետից դեպի որոշակի տեղերը և ցելու-



Գծանկ. 11 նպատակի հատումները

լուրջի բոլորակի կամ խորտո- անկյունաչափի ոգնութեամբ նշանակիր չափված անկյունները, անկյունները նշանակելուց հետո գծիր դիտակետերից դեպի նպատակի ուղղութիւնը, այս ուղղութիւնների հատման կետը կլինի նպատակի գտնված տեղը: Գծանկարներ 9, 10 և 11:

XIII ՄԻՆՁԵՎ, ՆՊԱՏԱԿՆ ՅԵՂԱԾ ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Մինչև նպատակին չեղած հեռակայութիւնը վորոշվում է՝

1) Աչքաչափով: Յերբ ձեռքի տակ քարտեզ և գործիքներ չկան:

Սխալը նվազեցնելու համար, ոգտագործիր նպատակի դիրքն այն տեղական առարկաների նկատմամբ, մինչև վորոնց հեռավորութիւնը հայտնի չէ. ոգտագործիր նպատակի չափերի անկյունային մեծութիւնը և այլն:

2) Քարտեզի միջոցով: Հնարավորութեան չափ մեծ ճշտութեամբ նշանակիր քարտեզի վրա նպատակի բռնած տեղը: Մասշտաբային քանոնի ոգնութեամբ չափիր հրանոթի գտնված կետից մինչև նպատակը չեղած հեռավորութիւնը:

3) Յերկզիտակի կամ ստերեոդիտակի միջոցով: Այս լեղանակը կարելի է կիրառել լեթե հայտնի լին նպատակի կամ այն տեղական առարկայի չափերը, վորի մոտ գտնվում է նպատակը: Դրա համար՝

ա) չափիր այն անկյունը, վորի տակ յերևում է նպատակը կամ նպատակին մոտիկ գտնված տեղական առարկան:

բ) Նպատակի (տեղական առարկայի) չափը բաժանիր չափելու ժամանակ ստացված անկյունի բաժանումների թվի վրա և քանորդը բազմապատկիր 1000-ի վրա, կատանաս մինչև նպատա-

կը յեղած հեռակայությունը: Որինակ. նպատակին մոտիկ գտնվող հեռագրասյունի բարձրությունը հավասար է 6 մետրի (3 սաժենի): Հեռագրասյունն յերևում է անկյունաչափի 0—05 բաժանման անկյունի տակ: Մինչև նպատակը յեղած հեռակայությունը հավասար է $\frac{6 \times 1000}{5} = 1200$ մետր (600 սաժեն):

XIV ՀԱՐԹԱՉԱՓԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հարթաչափը վորոշվում է նպատակի և մարտկոցի տեղերի բարձրությունների տարբերությամբ: Հարթաչափը կարելի է վորոշել քարտեզի հորիզոնականների միջոցով: Յեթն ձեռքի տակ քարտեզ չկա կամ լեթե քարտեզի վրա չի նշանակված մարտկոցի և նպատակի գտնված տեղերը, ապա վորոշիր դիտակետից մինչև նպատակն յեղած հեռավորությունը (լեռնադրենք այդ հավասար է 4000 մետրի) և ըուստով միադիտակի մոնուկուլյարի) կամ ստերեոդիտակի ոգնությամբ վորոշիր դիտակետից մինչև նպատակը յեղած տեղի անկյունը, արտահայտված անկյունաչափի բաժանումներով (դիցուկ դա հավասար է 1—00), այսպիսով նպատակի բարձրությունը դի-

տակետից հավասար է $\frac{4000 \times 100}{1000} = 400$ մետրի: Միննույնը կատարիր մարտկոցի նկատմամբ: Յենթադրենք, վոր դիտակետից մինչև մարտկոցն յեղած տեղի անկյունը հավասար է 2—00, ապա դիտակետը մարտկոցից բարձր է՝ $\frac{2000 \times 200}{1000} = 400$ մետրի: Այսպիսով նպատակի բարձրությունը մարտկոցից հավասար է 400 մետր + 400 մետր = 800 մետրի, այսինքն, նպատակը 800 մետրով բարձր է մարտկոցից:



Գծանկ 12. հարթաչափի վորոշումը

Չափելով մարտկոցից մինչև նպատակն յեղած հեռավորությունը (6000 մետր), տեղի անկյունը վորոշիր այսպես՝ $\frac{800 \times 1000}{6000} = 1.33$. Հետևաբար, տեղի անկյունը հավասար է պլյուս 1,33, այսինքն, հիմնական հրանոթի համար հարթաչափը հավասար է 31—33 (գծանկ. 12):

Սոցիալիստական մրցակց-ւթյան և հարվածայ-
նության միջոցով կատարելագործիր քո գիտելիք-
ները և բարձրացրու մարտական պատրաստու-
թյունդ:

Դաշտ դուրս գալիս ձգտիր պարզորոշ հասկա-
նալու քեզ և քո ստորաբաժանմանն առաջադր-
ված խնդիրը:

Հետախուզությունը թաքուն կատարիր և հե-
տևանքների մասին ժամանակին ու հակիրճ կեր-
պով զեկուցիր հրամատարին, վոչ մի ավելորդ
բան չավելացնելով քեզնից:

Քո որդիներդ նորմաները հետևյալն են՝

1. Ձեռքի մատներով, յերկդիտակով, ստերեո-
գիաակով և բուսստով սնկյուններ չափելը՝ 10
վայրկյան:

2. Քարտեզի կողմորոշումն կողմնացույցով՝ 30
վայրկյան:

3. Քարտեզի կողմորոշումն տեղական առար-
կաներով՝ 1 րոպե:

4. Անկյունի չափելը ցիլլոլոիդե բոլորակով՝
15 վայրկյան:

5. Կանգնած կետի տեղը քարտեզի վրա տե-
ղական առարկաներով վորոշելը՝ 1¹/₂ րոպե:

6. Տեղում ցույց տված կետը գտնելը քարտեզի
վրա, և ընդհակառակը՝ 1 րոպե:

7. Որելյենտրի նկատմամբ նպատակի բռնած
դիրքի մասին զեկուցելու համար՝ 30 վայրկյան:

8. Պայթյունի բարձրությունը և պայթյունի դը-
րությունը նպատակի նկատմամբ դիտելու և այդ
մասին զեկուցելու համար՝ 20 վայրկյան:

9. Ըստ ուղղության, բարձրության և հեռավո-
րության մի հերթի պայթյունները դիտելու և այդ
մասին զեկուցելու համար՝ 30 վայրկյան:

10. Աչքաչափով մինչև 5 կիլոմետր չեղած հե-
ռակայությունը վորոշելու համար, 10⁰/₁₀ րոպե վոչ
ավելի սխալ անելով—10 վայրկյան:

11. Կանոնագրքի յեղանակով կրակային դիրքի
ծածկոցի բարձրությունը չափելու համար, 1 մետ-
րից ավելի սխալ չանելու պայմանով՝
10 վայրկյան:

Աշխատիր գերակատարել տվյալ նորմանե-
րը և խտացրու հարվածաթիւնների շարքերը:

Քո անձնական աշխատանքը կառուցիր ա-
ռողջ սոցիալիստական մրցակցության հիմունքի
վրա և ամրացրու կարմիր Բանակի մարտական
հզորությունը:

I.	Հրետանային հետախուզութիւն	62	3—7
II.	Ճանապարհի հետախուզութիւն	8—15	
	1. Ճանապարհի հետախուզութիւն մեկ- նելուց առաջ		
	2. Ճանապարհի նախարդակը (կրօկի)		
	3. Շարժման ժամանակ		
	4. Կամուրջ զննելու ժամանակ		
	5. Գետի ծանծաղուտ (կտրոնք) փնտո- ւելու ժամանակ		
	6. Բնակարանորդի աշխատանք կատա- րելիս		
	7. Փարոսի և ուղղեցուցի աշխատանքը		
III.	Առաջավոր և հրամատարական հետա- խուզութիւն	15—20	
	1. Առաջավոր դիտակետի ընտրութիւնը		
	2. Հրամատարական դիտակետի ընտ- րութիւնը		
	3. Կողքի դիտակետի ընտրութիւնը		
IV.	Կրակային դիրքի հետախուզութիւնը	20—26	
	1. Կրակային դիրքի ընտրութիւնը		
	2. Նվազագույն նշանոց վորոշելը		
	3. Ծածկոցի բարձրութիւնը վորոշելը		
	4. Բաց դիրքի ընտրութիւնը		

V.	Կողմնորոշում	26—33
	1. Հյուսիսի ուղղութիւն վորոշելը ժա- մացուցի ոգնութիւնը	
	2. Հյուսիսի վորոշելն աստղերի ոգնու- թիւնը	
	3. Հյուսիսի վորոշելը տեղական առար- կաների ոգնութիւնը	
	4. Քարտեզի կողմնորոշելը	
	5. Կանգնած կեանքի վորոշելը	
VI.	Հետախուզող մարտում	33—43
VII.	Հետախուզութիւն մատչան	43—44
VIII.	Հեռատեսիլ գծանկար	44—47
IX.	Նպատակների սխեմա	47—52
X.	Մարտկոցի դասավորման սխեմա	52—53
XI.	Ինչպես պետք է վորոշել դիտակետի կամ հրանոթի գնահատման տեղը (կետը)	54—57
	ա) Յրեք այլ կետերի ոգնութիւնը, վորոնք կան տեղանքում և քարտեզի վրա բ) Յերկու կետերի ոգնութիւնը, վորոնք կան տեղանքում և քարտեզի վրա	
XII.	Նպատակի հատումները	58—60
XIII.	Մինչև նպատակը յեղած հեռակալու- թիւնը վորոշելը	60—62
XIV.	Հարթաչափի վորոշելը	62—63
XV.	Բարձրացրու մարտական պատրաստու- թիւնը	64—65

Գլավր. № 7589 (բ) Հրատ. № 2208 Պատ. 1607 Տիրած 5000
Պետերսբի տպարան, Յերևան

Հանձնված է արտադրության 9/1
Ստորագրված է սպեկու 8/VI

«Ազգային գրադարան



NL0219829

ԳԻՆԸ 25 ԿՈՊ. (2 ձ.)



Բ. ՐՕԶՅԻՆԿՕ

ՓԱՄՅԱՏԿԱ ԲԱԶՎԵԴՉԻԿՍՑ-ԱՐՏԻԼԼԵՐԻՍՏՍՍՑ

Գոսիզատ ՍՍՐ Արմենի
Ջրիվանի—1932